ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ

10.03.2020 18:49

2020 թվականի մարտի 10-ին տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի աշխատանքային քննարկումը, որին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի գլխավորությամբ մասնակցել են նաև ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչները՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ՝ Հարութ Ակլունցը, հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար՝ Մելանյա Առուստամյանը և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ, ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն՝ Սիմոն Բաբայանը:

Քննարկման ընթացքում Արա Զոհրաբյանը ներկայացրել է Հայաստանում փաստաբանական գործունեությանն առնչվող խնդիրները, ինչպես նաև խոսել է հանրային պաշտպանի գրասենյակի (այսուհետ՝ ՀՊԳ) կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնության հետ կապված խնդիրների մասին:

Փաստաբանությանն առնչվող խնդիրներից Արա Զոհրաբյանը խոսել է ձերբակալված կամ կալանավորված փաստաբանի տեսակցության, փաստաբաններին վիրավորելու և զրպարտելու, փաստաբանների կողմից իրականացվող հարցումների, դատավարական խնդիրների և փաստաբանությանն առնչվող այլ հարցերի մասին և ներկայացրել դրանց լուծման առաջարկներ:

Միաժամանակ, ՀՀ ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովին է ներկայացվել նշված խնդիրների մասին ամփոփ տեղեկանք՝ դրանց լուծման առաջարկներով:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անվճար իրավաբանական օգնությունն ապահովող հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության հետ կապված Արա Զոհրաբյանը հրապարակել է ՀՊԳ գործերի վիճակագրական տվյալները և ներկայացրել է հանրային պաշտպանների սոցիալական երաշխիքների, տրանսպորտային ծախսերի փոխհատուցման, գործերի քանակի և հանրային պաշտպանների վարձատրության հարաբերակցության, արտաժամյա աշխատանքի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում անհրաժեշտ փոփոխությունների և այլ հարցերի մասին:

ՀՊԳ գործունեության հետ կապված խնդիրների մասով նույնպես հանձնաժողովին են ներկայացվել է առկա խնդիրների և դրանց լուծման վերաբերյալ առաջարկների մասին ամփոփ տեղեկանք:

Բեռնել փաստաբանության խնդիրների վերաբերյալ 10.03.2020թ. տեղեկանքը.

Բեռնել ՀՊԳ գործունեության խնդիրների վերաբերյալ 10.03.2020թ. տեղեկանքը.

Բեռնել ՀՊԳ գործունեության խնդիրների վերաբերյալ 10.03.2020թ. տեղեկանքի հավելվածը (վիճակագրական տվյալները).

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })